ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԹԱՓԱՆՑՈՒՄԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Մ. Ս. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղում առաջին մարքսիստական պրոպագանդիստական խմբակների կազմակերպիչները այն ուսանողներն էին, որոնք սովորելով Ռուսաստանի քաղաքներում ու արտասահմանում, հայրենիք էին վերադառնում առաջավոր հայացքներով ու համոզմունքներով զինված։ Արխիվային փաստաթղթերից մեկում կարդում ենք. «Ամառային արձակուրդներն սկսվելուն պես, Ռուսաստանից վերադառնում են ուսանողները։ Շուշիում միշտ արտակարգ աշխուժություն էր զգացվում։ Կազմակերպվում էին երեկոներ, ղբոսախընջույքներ և այլն»[1]։

Շուշիում նման աշխուժություն էր նկատվում սկսած XIX դարի 90-ական թվականներից։ 1892 թ. հուլիսի 11-ին Շուշիից գրել են. «Տեղիս երիտասարդները եկվոր ուսանողների հետ սանիտարական խմբեր կազմելով, քաղաքը թաղ-թաղ բաժանելով, ման են գալիս և կարեցածի չափ օգնում ժողովրդին, իստակություն են սովորեցնում, չքավորներին փող են տալիս կամ պակասող բաները»[2]։

Լեռնաշխարհում մարքսիզմի գաղափարների առաջին պրոպագանդիստը, Շուշիի առաջին մարքսիստական խմբակի կազմակերպիչը եղել է, հետագայում բոլշևիկյան կուսակցության ականավոր գործիչ, Բոգդան Միրզաջանի Կնունյանցը, որը ծնվել է Ղարաբաղի Նգի գյուղում 1878 թ. նոյեմբերի 26-ին։

Նպատակ չունենալով տալ Կնունյանցի կյանքի ու հեղափոխական գործունեության մանրամասները[3], նշենք միայն, որ նա իր մանկությունը՝ «մինչև 16 տարեկան գառնալը անց է կացրել Շուշիում... 1895—1896 թվականներին նա ղեկավարել է աշակերտական խմբակներ, ունենալով նրա մասնակիցներին ինքնակրթելու և հայրենի պատմությանն ու կենցաղին ծանոթացնելու նպատակ»[4]։ Շուշիի ռեալական դպրոցը 1895 թ. ավարտելուց հետո Կնունյանցը հաջորդ տարի մեկնում է Պետերբուրգ և ընդունվում տեխնոլոգիական ինստիտուտ, որտեղ ակտիվորեն մասնակցում է ուսանողական հեղափոխական շարժումներին, Վ. Ի. Լենինի հիմնադրած «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» մեջ ստանում հեղափոխական առաջին մկրտությունը։ «Շուշեցի էր Բոգդանը,— գրել է Ստ. Շահումյանը,— ռեալական դպրոցի շրջանավարտներից, որը չքավորության պատճառով... երեք տարի կրթության միջոց ձեռք բերելու նպատակով այս ու այն կողմ գնալով, համենայն դեպս 1896 թվականին կարողանում է մտնել այն ժամանակվա Պետերբուրգի տեխ-

---

1 *ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 4048, ց. 1, գ. 75, թ. 5։*

2 *ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227. ց. 1, գ. 696, թ. 9։*

3 *Տե՛ս Հ. Գ. Ինճիկյան, Բոգդան Կնունյանց, 1957, Երևան։*

4 *ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4048, ց. 1, գ. 68, կապ. 1, թ. 1։*

նոլոգիական ինստիտուտը։ Ուսանողական մտքերի խմորման, հասարակական բուռն կյանքի մի պահ էր, երբ եռանդոտ ու կրակոտ Բոդդանն ընկնում է Պետերբուրգ։ Հասարակական ու քաղաքական շարժմանը հարաղատ, այդ շարժումն իր տարերք համարող Բոդդանն ընկնում է պայքարի հորձանուտները, նրա բուռն հոսանքն ու կենտրոնական դեմքերից մեկը հանդիսանում»[5]։

Բոդդան Կնունյանցը քաղաքական կյանքի ասպարեզ ելավ այն ժամանակ, երբ «բանվորական շարժման գարնանային պահն էր Անդրկովկասում բացել իր դեռևս մատաղ, բայց զորեղ ծիլերը, որին սպառնում էր ցարական ռեակցիան իր դաժան ու մռայլ ոստիկանական ու ժանդարմական կրունկներով»[6]։

Հեղափոխական շարժումներին մասնակցելու համար նա 1897 թ. կարճատև բանտարկության է ենթարկվում։ Այդ թվականի ամռանը Բ. Կնունյանցը արձակուրդն անցկացնում է Շուշիում։ Այստեղ էլ նա կազմակերպում է Շուշիի (և Ղարաբաղի) մարքսիստական առաջին խմբակը։ Այդ խմբակի մասին մեզ հաջողվել է հայտնաբերել արխիվային մի փաստաթուղթ, որը հրապարակվում է առաջին անգամ։ Դա խմբակի անդամ Ն. Դ. Փիրումովի հուշերն են։ Փիրումովն այնտեղ պատմում է, որ «Մարքսիստական խմբակը փաստորեն կազմակերպվեց դեռ 1897 թվականին՝ Շուշվա ռեալական ուսումնարանում 5-րդ դասարանի աշակերտներից։ Խմբակը կազմակերպվել է 1897 թվականի ամռանը՝ Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտի ուսանող ընկեր Բոդդան Միրզաջանի Կնունյանցի (Ռուսով, Ռադին) կողմից։ Խմբակի կազմի մեջ մտնում էին Ն. Դ. Փիրումովը, աշակերտներ Երվանդ և Լևոն Սարգսյանները, Պավել Խաչիևը, Արտեմ Լալաևը, Վանյա Մելիք-Օսիպովը»[7]։

Ի՞նչ էին ուսումնասիրում խմբակում։ Առաջին պարապմունքների ժամանակ ընթերցվում են Բիչեր Ստոուի «Քեռի Թոմասի տնակը» գիրքը, պատմում Սերվանտեսի «Դոն-Կիխոտ» գրքի բովանդակությունը և այլն[8]։ Իսկ «արանքում,— գրել է Ն. Փիրումովը,— Կնունյանցը շոշափում էր Ռուսաստանում հասարակական շարժման հարցերը, հաղորդում էր Գերցենի, Նեկրասովի, Գրանովսկու մասին, վերջապես համառոտ տեղեկություն էր տալիս եվրոպական իդեալիստների, Լասալի, Ռոբերտ Օուենի մասին։ Նա առաջին անգամ մեզ հաղորդեց Կարլ Մարքսի փիլիսոփայության մասին»[9]։

Բ. Կնունյանցը խոսելով բանվոր դասակարգի դրության մասին, օրինակներ էր բերում Շուշիի գավառի առևտրա-արդյունաբերողներ Հարունովների, Դավիթ Ափյանցի և ուրիշների մետաքսամշակման ֆաբրիկաների բանվորների կյանքից։ Կնունյանցը «խոսում էր նաև Աղդամի գինեմշակման գործարանների գործարանատեր Խուբլարովների և Հարունովների կողմից բանվորներին շահագործելու մասին, որտեղ արդեն սկսվել էին բանվորական շարժումներ՝ աշխատավարձը ցածր լինելու և ընդհանրապես տերերի դաժան շահագործման պատճառով»[10]։

Խմբակի պարապմունքները շարունակվել են 1897 թ. հունիսի 20-ից մինչև օգոստոսի 15-ը։ «Մարքսիստական այդ առաջին խմբակը հետագայում աճեց

---

5 Նույն տեղում, գ. 70, թ. 4։
6 Նույն տեղում, թ. 1։
7 Նույն տեղում, գ. 75, թ. 3։
8 Նույն տեղում։
9 Նույն տեղում, թ. 3—4։
10 Նույն տեղում, թ. 4։

և տվեց մի քանի տոկուն հեղափոխականներ, որոնց թվում Սլավա Կասպարովին, Զինաիդա Կասպարովային, Ալ. Ծատուրյանին (Ռուբենի)։ Այդ խմբակը համարձակ կերպով մրցում էր մյուս խմբակների հետ»[11]։

Ամառային արձակուրդից հետո Կնունյանցը խմբակի անդամներին հանձնարարեց պարապ չմնալ։ «Որպեսզի ձմռանը չտխրվեք,— ասում էր նա խմբակի անդամներին,— լավ կանեք, եթե չքավոր երեխաների մեջ գրագիտություն տարածեք»[12]։ Եվ իրոք, Բ. Կնունյանցի խորհուրդով նրանք 1897—1898 ուսումնական տարում կազմակերպեցին չքավոր երեխաների «ընդհատակյա դպրոց»՝ 25 հոգուց բաղկացած մի դասարան[13]։

Պարապմունքներն անցկացվում էին քաղաքի ծայրամասում, ինքնաշեն նստարաններով կահավորված մասնավոր տներում։ Մարքսիստական խմբակի անդամները կազմակերպում էին երեկոներ և հավաքած գումարներով գրքեր, ուսումնական պիտույքներ, մինչև անգամ հագուստներ գնում երեխաների համար։ «Ընդհատակյա դպրոցը» գործել է մեկուկես տարի՝ մինչև ոստիկանության կողմից հայտնաբերվելը և արգելվելը։ «Այնուամենայնիվ մենք կրթել ենք երկու տասնյակ երեխաներ,— գրել է Ն. Դ. Փիրումովը։— Իսկ դպրոցը փակելուց հետո մենք 20 երեխաների բաժանեցինք մեր՝ «ուսուցիչներիս» միջև և նրանց հետ պարապմունքները շարունակեցինք տներում։ Ուսուցիչների թվում էին մարքսիստական խմբակի անդամներ Փիրումովը, Երվանդ և Լևոն Սարգսյանները, Պավել Խաչիևը, Վանյա Մելիք-Օսիպովը, Տ. Թաթևոսը»[14]։

1898 թ. ամռանը Կնունյանցը նորից Շուշիում էր։ «Նա շատ հավանեց խմբակի անդամների կատարած աշխատանքը»[15]։ Այդ ամռանը Բ. Կնունյանցը շարունակեց պարապմունքները խմբակի անդամների հետ։ «Ռեալական ուսումնարանի աշակերտները գնում էին կոլեկտիվ լբոսանքի։ Նրանց միանում է նաև ուսանող ընկեր Կնունյանցը։ Հասնում են անտառը՝ Իսա-Բուլաղ (Պեխի աղբյուր) կոչվող տեղը, որտեղ ընկեր Կնունյանցը ռեալականների բարձր դասարանցիների հետ քաղաքական թեմայով պարապմունք է անցկացնում։ Այդ 1898 թվականի ամռանն էր՝ Ռուսաստանում բանվորական շարժման ուժեղացման մոմենտին»[16]։

«Իսա-բուլաղի» մոտ տեղի ունեցած պարապմունքի ունկնդիր Փիրումովը գրել է. «Նա միշտ օգտվում էր մեզ հետ հանդիպելու հարմար պահերից և պատմում հասարակական կյանքի այն երևույթների մասին, որոնք տեղի էին ունենում հեռավոր Հյուսիսում, հատկապես մայրաքաղաքում»[17]։

Եղբոր օրինակին հետևում էր քույրը՝ Փառանձեմ Ռիզելը (Կնունյանց), որը ծնվել է Շուշիում 1885 թ.։ Նախնական կրթությունը նա ստացել է հայրենի քաղաքում, միջնակարգը՝ Բաքվում, բարձրագույնը՝ Պետերբուրգում. Հեղափոխական շարժումներին ակտիվ մասնակցելու պատճառով Ռիզելը 1902 թ. Թիֆլիսում ձերբակալվել և արտաքսվել է Շուշի։ Ինչպես քաղաքում, այնպես էլ շրջակա գյուղերում նա կազմակերպչական, քաղաքական խոշոր աշխատանք էր կատարում։

11 Նույն տեղում։
12 Նույն տեղում։
13 Նույն տեղում, թ. 5։
14 Նույն տեղում։
15 Նույն տեղում։
16 Նույն տեղում, թ. 5։
17 Նույն տեղում։

Նշված ժամանակաշրջանում հեղափոխական պրոպագանդիստական և կազմակերպչական աշխատանք էին կատարում նաև Բ. Կնունյանցի եղբայրը՝ Լյուդվիգը և Ալեքսանդր Բեկզադյանը։

1901 թ. սեպտեմբերի 10-ին Կիևի ժանդարմական վարչությունում Ալ. Բեկզադյանից խլված իրերի, փաստաթղթերի ու նամակների քննության առթիվ կազմված արձանագրությունը վկայում է, որ Կիևի հայկական մարքսիստական խմբակը, հատկապես նրա ղարաբաղցի աշքի ընկնող անդամներ Ալ. Բեկզադյանն ու Լ. Կնունյանցը սերտ կապերի մեջ են եղել նաև Շուշիի, Բաքվի ու Թիֆլիսի հայկական հեղափոխական երիտասարդության և ուսանողների հետ[18]։

Պետերբուրգ սովորելու էին մեկնել և այնտեղից լեռնաշխարհի հետ կապ էին պահպանում նաև Սիմոն Հարությունի Ավետիսյանցը, Հովհաննես Մելիք-Հովսեփյանը և շատ ուրիշներ։ Սիմոն Ավետիսյանցը ծնվել է 1870 թ. Շուշիում։ Նա ավարտել է տեղի ռեալական ուսումնարանը և ընդունվել Պետերբուրգի անտառային ինստիտուտը։ Այստեղ երիտասարդ Սիմոնը մտնում է ուսանողական մարքսիստական խմբակի մեջ, տարածում հեղափոխական գրականություն, ընդունվում «Պայքարի միության» անդամների պայծառ համաստեղության մեջ[19]։ 1897 թ. Ս. Ավետիսյանցը արտաքսվում է Կովկաս։ Սկզբում նա գալիս է Շուշի, ապա մեկնում Բաքու։

Հովհաննես Մելիք-Հովսեփյանը (1882—1945) Շուշիի ռեալական ուսումնարանն ավարտելուց հետո ընդունվում է Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտի մեխանիկայի բաժին։ Նույն այս շրջանում նա հարում է հեղափոխական շարժումներին։ Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» չորս հայ անդամներից (Բ. Կնունյանց, Ա. Զուրաբյան, Ս. Ավետիսյանց և Հ. Մելիք-Հովսեփյան) երեքը, ինչպես տեսնում ենք, ղարաբաղցիներ էին (շուշեցիներ)։

Այսպիսով, եղբայրներ Բոգդան և Լյուդվիգ Կնունյանցները, Ալեքսանդր Բեկզադյանը, Սիմոն Ավետիսյանցը և Հովհաննես Մելիք-Հովսեփյանը, լինելով մարքսիզմի զարգացման լենինյան էտապի նշանավոր գործիչներ, պաշտպանել ու տարածել են մարքս-լենինյան ուսմունքը։ Նրանց կողմից Լեռնային Ղարաբաղում մարքսիզմի տարածման պատմության առաջին էջերը տակավին սկսել են գրվել XX դարի սկզբին։ Արդեն այդ ժամանակ ղարաբաղցի լենինյաններն իրենց նամակներում ու ելույթներում ցույց էին տալիս մարքսիստական ուսմունքի հեղափոխական նշանակությունը, պրոպագանդում մարքսիզմի կլասիկների երկերը։

Մարքսիստական գրականության տարածմանն օգնում էին ղարաբաղցի ուրիշ շատ ու շատ երիտասարդներ։ Շուշեցի Եփրեմ Տեր-Հակոբյանը և Համայակ

---

18 Ալեքսանդր Բեկզադյանի և Լյուդվիգ Կնունյանցի Ղարաբաղից դուրս ուսանողական շրջանի հեղափոխական գործունեության մասին տե՛ս պրոֆեսոր Խ. Հ. Բարսեղյանի «Ուկրաինական և հայ ուսանողության հեղափոխական կապերի պատմությունից» հոդվածը։ («Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն» բյուլետեն, 1967 թ., № 5—6)։

Բոլշևիկյան կուսակցության ակնավոր գործիչ Ալեքսանդր Բեկզադյանի կողմից Վ. Ի. Լենինին ուղարկած ութ նամակները առաջին անգամ հրապարակվել են պատմական գիտությունների թեկնածու Հ. Ն. Կարապետյանի կողմից։ (Տե՛ս «Բանբեր» Հայաստանի արխիվների, 1967, № 3)։

19 Տե՛ս Խ. Հ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1967, էջ 257։

Նազարյանը Պետերբուրգի հայ ուսանողական ընկերության անդամներ էին։ Այդ ընկերությունը հրատարակում էր էժանագին փոքրիկ բրոշյուրներ։ Ամառային արձակուրդներին նրանք իրենց հետ Շուշի էին բերում այդ բրոշյուրները և տարածում երիտասարդության մեջ, նպատակ դնելով «հեղափոխականացնել ժողովրդական մասսաները պատմական նմանությունների, անալոգիաների միջոցով»[20]։

Առհասարակ ղարաբաղցիների հասարակական զարդացման գործում շատ արդասավոր դեր են խաղացել Մոսկվայի, Պետերբուրգի և Կիևի բուհերը։ 1861—1903 թվականներին Մոսկվայի համալսարանում սովորած 450 հայերի մեջ կային նաև ղարաբաղցիներ, որոնք ոչ միայն գիտելիքներ էին ձեռք բերում, այլև ծանոթանալով ժամանակի առաջավոր հասարակական-քաղաքական գաղափարներին, դրանք հասցնում էին նաև հարազատ երկրամասը։ Միայն 1900 թ. հարյուրից ավելի շուշեցիներ էին սովորում Ռուսաստանի ու Արևմտյան Եվրոպայի բարձրագույն դպրոցներում[21]։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Շուշին ապրում էր զարդացող ու դեպի Արևմուտք հակվող տիպիկ արևելյան քաղաքի բուռն կյանքով։ Դարեվերջին այդտեղ արդեն սկսել էր եռանդուն դեր խաղալ ուսումնասեր երիտասարդության մի ստվար բազմություն, որի միջից դուրս են եկել բազմաթիվ նշանավոր դեմքեր՝ մարքսիզմի տեսաբաններ, հեղափոխական գործիչներ։

XIX դարի վերջին քառորդում Ռուսաստանում արագ զարդացող կապիտալիզմը իր ոլորտի մեջ առավ Անդրկովկասը։ Նավթի արդյունաբերության արագ զարդացման շնորհիվ, արագորեն զարդանում էր նաև Բաքուն։ 1875—1900 թվականներին քաղաքի բնակչությունը 50 հազարից հասավ 250 հազարի։ Նոր դարեսկզբին հայ պրոլետարիատի մեծ մասը (20—22 տոկոսը) Բաքվում էր։ Նավթաշխարհի պրոլետարիատը մեծ չափով համալրվում էր Լեռնային Ղարաբաղի գյուղացիներով։ Նավթահանքերը դեպի իրենց էին ձգում տնտեսապես քայքայվող գյուղի ընչազուրկներին։ Բաքվի և նրա նահանգի 65 հազար բանվորներից (1897 թ.) 5,4 հազարը գաղթել էին Ելիզավետպոլի նահանգից՝ հիմնականում Ղարաբաղից, Զանգեզուրից ու այլ վայրերից։ Արխիվային մի փաստաթղթում ասված է. «Ղարաբաղի, Զանգեզուրի և Ղափանի բազմաթիվ հայ գյուղեր օրեցօր դատարկվում են»[22]։ Դա բացատրվում էր գյուղացիների անապահով վիճակով։ «Ահա մի քանի օրավար հող,— գրել է ականատեսը։— Լավ նայեցեք, որքան մանր կտորների է բաժանված այդ փոքրիկ երկու օրավար հողը... Ահա մի այգի, որի մեջ աչքի են ընկնում մի քանի ողորմելի պտղատու ծառեր։ Մտեք ներս, քանի՞-քանի ցանկապատներ են, որոնք իսկույն աչքի են ընկնում՝ բաժանելով մանր կտորների այդ խեղճ ու կրակ այդին... Կարիքներից ազատվելու համար գյուղացին սկսում է երազել օտարության, պանդխտության մասին...»[23]։

Լեռնաշխարհից Բաքու մեկնած և պրոլետար դարձած գյուղացիները մասնակցում էին Բաքվի կոմիտեի կողմից կազմակերպվող խմբակների պարապմունքներին, լսում հեղափոխական զեկուցումներ ու դասախոսություններ։

---

20 Լ ե ո, Անցյալից, հրատարակչություն «Խորհրդային Կովկասի», Թիֆլիս, 1925, էջ 43—44։

21 Տե՛ս Հ. Ն. Կ ա ր ա պ ե տ յ ա ն, Մեծ պայքարի մարդիկ, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1967, էջ 226։

22 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 313, ց. 1, գ. 31, թ. 27—31։

23 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 397, թ. 14։

Բաքվում կազմակերպված խմբակների անդամներից շատերը կապված էին Լեռնային Ղարաբաղի գյուղերի հետ։ Փառանձեմ Ռիզելի վկայությամբ մինչև 1903 թ. Շուշիում գործում էին Բաքվից եկած սոցիալ-դեմոկրատներ, որոնք ապրում էին ոչ միայն քաղաքում, այլև գյուղերում։ Բաքվի կոմիտեի անդամները խմբակներում զեկուցումներ ու դասախոսություններ կարդալուց բացի, ունկնդիրներին սովորեցնում էին, որ «նրանք սիստեմատիկաբար նամակ գրեն տուն, իրենց համագյուղացիներին և հարազատներին տեղյակ պահեն քաղաքական անցուդարձի մասին, համապատասխան ձևով բացատրեն այդ դեպքերի նշանակությունը՝ կապակցելով իրենց գյուղացիների շահերի ու ձգտումների հետ»[24]։

Բաքվի կոմիտեի հանձնարարությունները բարեխղճորեն կատարում էր Սեմյոն Ավետիսի Ղազարյանը, որը ծնվել է 1874 թ. Ղայբաշի (Դահրավ) գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։ 1887 թ. նա մեկնում է Բաքու՝ աշխատանք փնտրելու։ Ղազարյանը հատուկ հանձնարարություններով հաճախ մեկնում էր իր ծննդավայրը և ընդհատակյա աշխատանք տանում գյուղացիների մեջ։ Այդպես էր վարվում նաև Նիկոլայ Թևոսի Կասպարովը, որը ծնվել է 1880 թ. Կուսապատ գյուղում, դարբնի ընտանիքում։ 1896 թ. Նիկոլայն ավարտում է գյուղի երկդասյան դպրոցը և աշխատանք որոնելու նպատակով մեկնում Բաքու։ Սոցիալ-դեմոկրատական գաղափարները նա զանազան ձևերով (նամակներով, արձակուրդների ժամանակ անձամբ) հասցնում էր հարազատ ծննդավայրը։

Բաքվի կոմիտեի անդամների միջոցով Լեռնային Ղարաբաղի գյուղերն էին ուղարկվում հեղափոխական թռուցիկներ ու կոչեր։ Արձակուրդների ժամանակ գյուղ գնացող ղարաբաղցի բանվորները հատուկ հանձնարարություններ էին ստանում կոմիտեի անդամներից։

Պրոլետարական Բաքուն վեր էր ածվել հեղափոխական կադրերի պատրաստման դարբնոցի, որտեղից մարքսիստական գաղափարներով զինված տասնյակ հեղափոխականներ, տարբեր ժամանակներում, մեկնել են Լեռնային Ղարաբաղ և աշխատավորներին լուսավորել մարքսիստական-լենինյան գաղափարներով։

Լեռնային Ղարաբաղում մարքսիզմի տարածմանը զգալի չափերով նպաստել են սոցիալ-դեմոկրատական առաջին խմբակները, որոնց կազմակերպիչները դարձյալ հեղափոխական ուսանողներն էին։ Արխիվային փաստաթղթերից մեկում ասված է. «Շուշի էին արտաքսվել հեղափոխական տրամադրությամբ ուսանողներ, որոնց օգնությամբ այդտեղ ստեղծվեցին սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ»[25]։ Շուշիում սոցիալ-դեմոկրատական առաջին խմբակները կազմակերպվել են 1901—1903 թվականներին։ Իրենց կազմակերպման հենց սկզբից այդ խմբակները հանդես եկան որպես ՌՍԴԲԿ տեղական կազմակերպություններ և կառուցվեցին պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներով։ 1901—1903 թթ. Ղարաբաղի ամենաակտիվ ընդհատակյա խմբակը Շուշիի ռեալական ուսումնարանի աշակերտական ընդհատակյա ինտերնացիոնալ խմբակն էր։ Նրա միջոցով տպագրվեցին մարքսիս

---

24 Հ. Ինճիկյան, Բոգդան Կնունյանց, Հայպետհրատ, Երևան, 1957, էջ 45։

25 ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4033, ց. 1, գ. 20, թ. 2։

տական մի շարք գրքույկներ։ 1902 թ. ապրիլ-մայիսին ուսումնարանի 5-րդ կուրսի ուսանող, 18-ամյա Սամսոն Սահակյանցի մոտ ոստիկանության կողմից հայտնաբերվել են «ՌՍԴԲԿ մանիֆեստը», «Հունիսի 2-ի օրենքը՝ բանվորական օրվա տևողության և բաշխման մասին», «Ռուսական բանվորական շարժումը 1897 թվականին», «Լեհական բանվորական շարժումը 1897 թվականին»[26]։

Այդ առթիվ ոստիկանության կողմից հարցաքննվել են ուսանողներ Սահակյանցը, նրա համագյուղացի Արսեն Մինասյանը, Ալի Բաբաևը, Վիկտոր Մանդրիկինը, Ալեքսանդր Ռիխիլաձեն և ուրիշներ։ Ստուգումների ժամանակ հայտնաբերվել են նաև Տուրգենևի երկերը, հեղափոխական բանաստեղծություններ և այլն[27]։

Հայտնի է, որ «Իսկրա»-ն Ռուսաստան էր բերվում կոնսպիրատիվ միջոցներով։ Այդ գործում ևս Բաքվի իսկրայականներին մեծ օգնություն էին ցույց տալիս զարաբաղցիները։ Նրանցից մեկն էր Արտեմ Պողոսի Աղամալյանը (1884—1963)։ Զաքադուզ գյուղի չքավոր գյուղացու զավակ Արտեմը 1392 թ. տեղափոխվում է Բաքու և աշխատանքի ընդունվում նավթահանքերում, ընդգրկվում հեղափոխական աշխատանքի մեջ։ Բաքվի Կոմիտեի հանձնարարությամբ Աղամալյանը 1903 թ. երկու անգամ (գարնանը և ամռանը) անցնում է ռուս-պարսկական սահմանը և Պարսկաստանից Բաքու տեղափոխում լենինյան «Իսկրա»-ի համարները՝ մարքսիստական ուրիշ գրականության հետ միասին։

1902 թ. մայիսի 16-ին ոստիկանները Շուշիում հայտնաբերել են «Իսկրա»-ի 19-րդ համարը։ Խուզարկողների զեկուցագրում ասված էր, որ գրոշմանիշի վրա եղած նշումների համաձայն այն ուղարկվել է Լայպցիգից։ 1967 թ. հոկտեմբերին Հադրութի շրջանի Կեմրակուճ գյուղում հայտնաբերվեց «Իսկրայի» մի համար։

Ինչպե՞ս էր այն ընկել լեռնային Կեմրակուճ գյուղը։ Ո՞վ էր նրա բաժանորդն ու առաջին ընթերցողը։ Այս հարցերին պատասխանում է 1919 թ. ՍՄԿԿ անդամ Հայկ Դավթյանը։ «Զարմանալու ոչինչ չկա։ Այս Արսեն Տեր-Հովհաննիսյանի լուսանկարն է, որն ավարտել է Շուշվա թեմական դպրոցը և ուսուցչությամբ էր զբաղվում մեր գյուղում։ Նա ժամանակի առաջադեմ մարդկանցից էր, ստանում էր մարքսիստական գրականություն, գիշերները՝ աղոտ լույսի տակ «Իսկրա» թերթ էր կարդում։ Լինում էր՝ փաթեթներ էր ստանում ժնևից, Ռուսաստանի խոշոր քաղաքներից»[28]։

Այս փաստը վկայում է, որ 1901—1903 թթ. լենինյան «Իսկրա»-ն և իսկրայական հրատարակությունները տարածվում էին ոչ միայն Շուշի քաղաքում, այլև լեռնաշխարհի գյուղերում։ Դրանց առաքումը Լեռնային Ղարաբաղ անգնահատելի դեր խաղաց հայ և ադրբեջանցի աշխատավորների շրջանում մարքսիստական գաղափարների տարածման, լենինյան, իսկրայական ուղղության սոցիալ-դեմոկրատական խմբակների ձևավորման գործում։

Ստեփան Շահումյանի խոսքերն այն մասին, որ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններն իրենց մարքսիստական պրոպագանդայով թափան-

---

26 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 114, ց. 2, գ. 42, թ. 45—46։

27 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 114. ց. 2, գ. 42, թ. 46։

28 «Սովետական Ղարաբաղ», 19 հոկտեմբերի 1967 թ., № 246։

ցում էին հայկական պրովինցիայի «մթին թագավորությունը»[29], վերաբերում էին նաև Լեռնային Ղարաբաղին։

РАСПРОСТРАНЕНИЕ МАРКСИЗМА В НАГОРНОМ КАРАБАХЕ В КОНЦЕ XIX — НАЧАЛЕ XX ВВ.

М. С. СОГОМОНЯН

Резюме

Распространение идей революционного марксизма в Нагорном Карабахе тесно связано с именами верных учеников В. И. Ленина. На заре коммунистического движения в России вместе с русскими революционерами встали под знамя ленинизма и лучшие сыны Нагорного Карабаха — Б. Кнунянц, В. Каспаров, А. Бекзадян, Л. Кнунянц, Ф. Ризел, С. Касьян, С. Тер-Габриелян, И. Мелик-Овсепян, С. Аветисянц и многие другие. С конца 90-х годов прошлого века в городе Шуше возникает первый марксистский кружок. В распространении марксизма и формировании социал-демократических групп в Нагорном Карабахе огромную роль сыграли ленинская «Искра» и искровские издания, которые в 1902—1903 гг. распространялись не только в г. Шуше, но и в отдаленных селах.

В общественно-политическом развитии трудящихся велика была роль студенческой молодежи. Благодаря усилиям революционно настроеннной части армянского студенчества в конце XIX — начале XX вв. среди трудящихся Нагорного Карабаха начали распространяться марксистские идеи. В борьбе против дашнаков, мелкобуржуазных националистических партий, меньшевиков и «спецификов» росли и закалялись большевистские группы в Карабахе.

---

29 Ս տ. Շահումյան, երկեր, հատ. 1, էջ 52։